ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 6 - Լ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 4-րդ ենթակետով և քննարկելով <<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում փոփոխություններ կատարելու հարցը՝

Համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

<<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

4. Համալսարանի կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերը սահմանվում են ելնելով պաշտոնի հավակնորդի՝

ա/ մասնագիտության կրթական տրամադրվող ծրագրի շրջանակներում ունեցած որակավորման և ՄԿԾ ելքային արդյունքներին համապատասխանությունից,

բ/ կրթական ծրագրի մաս կազմող այլ դասընթացներին ու կրթական մոդուլներին ընդհանրական տիրապետումից և մանկավարժական որակների առկայությունից,

գ/ ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության 4.1, 4.2, 4.3, 4.4 ցուցանիշներից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ